Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը**, **ազգանունը**, **զբաղեցրած պաշտոնը**.

Անահիտ Ավանեսյան, առողջապահության նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

2024 թվականի փետրվարի 5-7-ը, Հունգարիա (Բուդապեշտ)

3. **Հրավիրող կողմը**

Հունգարիայի կառավարություն

4. **Գործուղման նպատակը** (**աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը**)

Հանրապետության նախագահի գլխավորած պատվիրակության կազմում կայացած այցի նպատակն էր մասնակցել այցի շրջանակներում իրականացվելիք հանդիպումներին՝ քննարկելու առողջապահության բնագավառում Հայաստանի և Հունգարիայի միջև հնարավոր համագործակցության ուղղությունները:

5. **Քննարկված թեմաները**

Այցի ընթացքում հանդիպում է տեղի ունեցել Հունգարիայի առողջապահության ոլորտը համակարգող Ներքին գործերի նախարար Շանդոր Պինտերի հետ: Քննարկվել են առողջապահության ոլորտում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, մասնավորապես՝ դեղագործության և էլեկտրոնային առողջապահության ոլորտում հնարավոր համագործակցության ուղղությունները:

6. **Հանդիպումները**, **ելույթները**, **բարձրացված կամ քննարկված հարցերը**

Ներքին գործերի նախարարի հետ կայացած հանդիպման արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մշակել առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագրի նախագիծ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը Հայաստանի և Հունգարիայի միջև: Երկու կողմերն էլ առողջապահության ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքներ տանելու պատրաստակամություն են հայտնել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել կողմերի փոխգործակցությունն ու կապերը:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

2024 թ. փետրվարի 12

12.02.2024

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	N 112-Ա 06.02.2024թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)	Նախարար Անահիտ Ավանեսյան
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)	
4. Գործուղման վայրը	Հունգարիա Հանրապետություն ք. Բուդապեշտ
5. Գործուղման ժամկետները	2024թ.Փետրվարի 5-7-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝	
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը	Գիշերավարձ
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)	
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը	Օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0.0		0.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0.0		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0.0		
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 84.00		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	33956.16		33.95
	Օրերի քանակը	3		
	Ընդամենը (դրամ)	101868.48		101.87
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		101.87		101.87

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

(ստորագրություն) 07.02.2024թ.